ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 24.01.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/214

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝ ի դեմս Միեր Անանյանի

Մասնակցությամբ՝ «Ջի Թի Սի» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Գ. Մուրադյանի (Լիազորագիր տրված՝ 27.12.2018թ.)

Ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 25.12.2018թ. թիվ 27/26-3/24101-18 գրությամբ «Ջի Թի Սի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի 19.12.2018թ. թիվ 09/2040 գրության հիման վրա, 25.12.2018թ. թիվ 27/26-3/24101-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Ջի Թի Սի» ՍՊԸ-ին (այսուհետ՝

Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Ջի Թի Սի» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Ջի Թի Սի» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 27.12.2018թ. թիվ Գ-011/2118 գրությամբ հայտնել է, որ Ընկերությունը «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից կազմակերպված «ԷԱՃԱՊՁԲ-2019/16-1-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի մի քանի չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Սակայն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ Ընկերության կողմից՝ հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի խափանման հետևանքով, ՀՀ ՊԵԿ ներկայացված է եղել սխալ տվյալներով ավելացված արժեքի հարկի հաշվետվություն, որի արդյունքում Ընկերության՝ ՀՀ ՊԵԿ-ում վարվող անձնական քարտում առաջացել է գերավճար ԱԱՀ-ի գծով և պարտք՝ եկամտային հարկի գծով:

Ընկերությունը հայտնել է, որ վերջինիս անձնական քարտում առկա է գերավճար մոտ երկու անգամ ավել չափով:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/214 ընթացակարգի շրջանակներում 27.12.2018թ. ժամը 10:55-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ ժամկետանց հարկային պարտավորությունն առաջացել է հարկային միասնական հաշվեհամարի պատճառով: Ընկերությունը սահմանված ժամկետում կատարել է վճարումները, սակայն անհասկանալի պատճառներով Ընկերության մոտ եկամտահարկի գծով գոյացել է պարտավորություն, իսկ ԱԱՀ-ի մասով՝ գերավճար:

3. **<u>«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը (այսուհետ՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 19.12.2018թ. թիվ 09/2040 գրությամբ հայտնել է, որ սույն թվականի նոյեմբերի 21-ին «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից բժշկական նշանակության ապրանքների՝ գործիքների և պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԷԱՃԱՊՁԲ-2019/16-1-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ՝ Ընթացակարգ): Ընթացակարգի մասնակիցների թվում հայտ է ներկայացրել նաև «Ջի Թի Սի» ՍՊԸ-ն, որը գնահատող հանձնաժողովի 05.12.2018թ. թիվ 3 որոշմամբ ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից 3-րդ, 4-րդ և 7-րդ չափաբաժինների մասով:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 19-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 06.12.2018թ. հարցում է ներկայացրել ՀՀ պետական եկամուտների կոմիտե հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Գնահատող հանձնաժողովի 12.12.2018թ. թիվ 4 որոշմամբ արձանագրվել է, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 11.12.2018թ. տրված եզրակացության համաձայն՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (27.11.2018թ.) «Ջի Թի Սի» ՍՊԸ-ի ժամկետանց հարկային պարտավորությունների չափը 3-րդ և 7-րդ չափաբաժինների մասով գերազանցում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված շեմը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/214 ընթացակարգի շրջանակներում 27.12.2018թ. ժամը 10:55-ին նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. **<u>ՍՑ-ԱՄ-2018/214 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

ՍՑ-ԱՄ-2018/214 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար կազմակերպվել է «ԷԱՃԱՊՁԲ-2019/16-1-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով **27.11.2018թ.** հայտ է ներկայացրել «Ջի Թի Սի» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.12.2018թ. ժամը 09:30-ի նիստի թիվ 3 արձանագրության կայացված որոշմամբ «Ջի Թի Սի» ՍՊԸ-ն 3-4-րդ, 7-րդ, չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

3. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 20-րդ կետի հիման վրա 11.12.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Ջի Թի Սի» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 5 768 ՀՀ դրամի չափով:***

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.12.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընկերության հայտը 3-րդ և 7-րդ չափաբաժինների մասով մերժվել է:

5. **<u>ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 25.12.2018թ. թիվ 27/26-3/24101-18 գրությունը, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի

19.12.2018թ. թիվ 09/2040 գրությունը և կից փաստաթղթերը, «Ջի Թի Սի» ՍՊԸ-ի դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 3-րդ կետի համաձայն՝ Էլեկտրոնային աճուրդով գնումների կատարման դեպքում գործում են գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները՝ հաշվի առնելով սույն կարգով սահմանված առանձնահատկությունները:

Կարգի 11-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում են նաև, որ մասնակցի հայտը ներառում է միայն գնային առաջարկը: Ընդ որում, մասնակիցը գնային առաջարկ կարող է ներկայացնել, եթե բավարարում է հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների պահանջները: Գնային առաջարկը ներկայացնելը համարվում է սույն ենթակետով նախատեսված պահանջներին մասնակցի տվյալների համապատասխանությունը հավաստող հայտարարություն:

Կարգի 19-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ աճուրդն ամփոփվելուն հաջորդող աշխատանքային օրը գնահատող հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) է ներկայացնում հարցում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով սահմանված «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Նույն կարգի 20-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 19-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվություն չստացվելու դեպքում առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը համարվում է այդ պահանջները բավարարող: Եթե կոմիտեի կողմից սույն կետով սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն. զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով սահմանված «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է, իսկ պայմանագիրը կնքված լինելու դեպքում կիրառվում են գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության

պահանջները: Եթե սահմանված ժամկետում կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվության արդյունքում արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ, ապա հայտերի գնահատման նպատակով հրավիրված նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող լրացուցիչ տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

Կարգի 21-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին: Սույն կարգի 20-րդ կետով սահմանված հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նպատակով հրավիրված նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար կազմակերպվել է «ԷԱՃԱՊՁԲ-2019/16-1-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով **27.11.2018թ.** հայտ է ներկայացրել «Ջի Թի Սի» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.12.2018թ. ժամը 09:30-ի նիստի թիվ 3 արձանագրության կայացված որոշմամբ «Ջի Թի Սի» ՍՊԸ-ն 3-4-րդ, 7-րդ, չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 20-րդ կետի հիման վրա 11.12.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Ջի Թի Սի» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 5 768 ՀՀ դրամի չափով:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.12.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընկերության հայտը 3-րդ և 7-րդ չափաբաժինների մասով մերժվել է:

Այսպիսով՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 11.12.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Ջի Թի Սի» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է 5 768 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն, որը գերազանցում է Ընկերության կողմից Ընթացակարգի 3-րդ (240 372 ՀՀ դրամ) և 7-րդ (91 000 ՀՀ դրամ) չափաբաժինների մասով ներկայացված գնային առաջարկի մեկ տոկոսի չեմը: Մինչդեռ Ընկերությունը հայտի թիվ 1 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԷԱՃԱՊՁԲ-2019/16-1-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:***

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 7-րդ կետի 7.12-րդ ենթակետով սահմանվել է, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հայտով ներկայացված հայտարարությունը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ***մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում***

ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին փվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 11.12.2018թ. տրամադրած եզրակացությունը, գտնում եմ, որ «Ջի Թի Սի» ՍՊԸ-ն «ԷԱՃԱՊՁԲ-2019/16-1-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակներում թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտում:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 25.12.2018թ. թիվ 27/26-3/24101-18 գրությամբ «Ջի Թի Սի» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 02677537) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Ջի Թի Սի» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ